ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ՄԻՇԱ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻՆ

30.05.2019 10:49

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը երկարամյա արդյունավետ մասնագիտական գործունեության համար պարգևատրել է փաստաբան Միշա Փիլիպոսյանին «Աշխատանքային վաստակի համար» մեդալով:

Նշենք, որ օրեր առաջ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը դիմել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ առաջարկելով միջնորդել պարգևատրել Միշա Հայկազի Փիլիպոսյանին ։

«Հանրապետության տոնին» ընդառաջ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը պարգևատրել է վաստակավոր փաստաբանին։

Միշա Հայկազի Փիլիպոսյանը ծնվել է 1938 թվականի հուլիսի 11-ին Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Մաստարա գյուղում:

Փաստաբանությամբ սկսել է զբաղվել 1968 թվականից՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո, իսկ 1972 թվականին նշանակվել է Շահումյանի շրջանի իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ: Երկար տարիներ եղել է Հայաստանի Հանրապետություն փաստաբանների կոլեգիայի նախագահության անդամ:

1992-1996 թվականներին ընտրվել է Կոլեգիայի նախագահության նախագահի առաջին տեղակալ, իսկ 1996 թվականից նախագահել է Կոլեգիայի նախագահությունը:

1999 թվականի մարտի 7-ին Հայաստանի Հանրապետություն փաստաբանների միության հիմնադիր ժողովում ընտրվել է Հայաստանի Հանրապետություն փաստաբանների միության առաջին նախագահ:

2003 թվականի մարտի 1-ին վերընտրվել է Հայաստանի Հանրապետություն փաստաբանների միության նախագահ:

2005-2009 թվականներին ղեկավարել է Հայաստանի Հանրապետություն փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը:

2009-2011 թվականներին աշխատել է որպես հանրային պաշտպան:

*Միշա Փիլիփոսյանը համարվում է ամենաերկար փաստաբանական ստաժ (1968-2019թթ.-**51 տարի**) ունեցող փաստաբանը, ինչպես նաև փաստաբանական միությունում և միության իրավահաջորդ փաստաբանների պալատում ամենաերկար աշխատանքային ստաժ ունեցած փաստաբանը՝ 1972-2011թթ. (**39 տարի**):*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })